

Մ Է Ե Տ Ա Բ Ե Բ



“ՓՈՂ ՏՈՒԲԻՔ ՄԵԼԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳՐԱՆ” ԴՈՒԿ. ԴԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1894

ԹԻԻ 5



ԳԵՏԸ

Չկայ բան մը աւելի խաղաղ քան
գետ մը որ ուրբուն ընթացքով կ'եր-
թայ խոտաւէտ մարդագ ետիններու մէ-
ջէ, մինչ երկու կողմի ծառերը ի-
րենց ճիւղերը կը մխեն անոր շողշո-
ղուն շարերուն մէջ: Այս երկատարողը
խնայաւոր թեմաք այսպիսի գետ մը բե-
րած է իր մայրը որ յոգնած է շատ
գործերով, և թէ՛ հիւանդ է թէ՛
ախուր: Հանդիսոր որուն պէտք ունի
մաշը, կ'որոնի չէ՛ր գանձել բազմու-
թեան մէջ, այլ այն սեղիւն հանգար-
տութեան մէջ ուր կը լսուի բնու-

ԳԵՏԻ ՎՐԱՅ ՆԱԽԳՈՒԹԻՒՆ

թեան ձայնը միայն: Մայր և սրբի
կ'ըսեն իրարու թէ գետը կը սորվե-
ցընէ համբերութեան դաս, վասն զի
չտալ նապիրժովը հասնելու օճապարե-
լով, այլ հանգարտութեամբ կը հօտի:
Կը հանեն նաև սա գառը թէ ինչ-
պէս որ գետին հանգարտ հասումը ար-
դիւնք է լեռներուն վրայ իջնող անձ-
րեին և ձիւնին կատաղի փոթորիկնե-
րուն, այսպէս ալ երկնից հանդիսոր
պիտի հասնինք այս կեանքին նեղու-
թիւնները և փորձութիւնները կրելէ
ետքը:

ՄԵՌՆԱՎ ԾՈՎԸ

Չանագան անուններ տրուած են
Մեռեալ Մովսէս: Այժմու անունը,
Մեռեալ Մով, երած է հին նախա-
պաշարումէ մը թէ անոր վերը և շուր-
ջը գանուող միջնորդար թունաւոր է
և թէ անոր շուրէն խմողը անշուշտ կը
մեռնի:
Առ հասարակ կը կարծուի թէ Մեռ-
եալ Մովսէս շարերը գէշ և սոսկալի
հոտ մը սնին. բայց երբեք հոտ չու-
նին: Գարշահոտութիւնը որմէ այնքան
կը գանդ ասին ճանապարհորդները,
բոլորովին կու գայ անոր եղերքը գըւ-

նուող տաք ծծմբային բաղնաթիւ աղ-
բիւրներէն : Ծծմբային օդին եւթար-
կուող ամէն բան պղնձի գոյն կ'առ-
նէ . և ծովեզերքը և ծովուն ներքե
գտնուող քարերը և մերձակայ լեռ-
ներուն կողերը պատած են աղի կե-
ղևով : Մառախուղի ձևով ամպ մը ,
տաք չոգիի նման , կը կախուի ծովուն
հարաւային բաժնին վրայ , և նուրբ ,
թափանցիկ և կարմրադոյն ամպ մը
գրեթէ միշտ կը տեսնուի հիւսիսային
բաժնին վրայ , բացի այնպիսի ժամա-
նակներէ երբ կը ցրուի «բոլոր» կոչուած
զօրաւոր հովէն : Աղը հարաւային մա-

չգտնուիր : Ստոյգ է որ ձուկ քիչ կայ
հան , կը գտնուի միայն անոր մէջ թա-
փող գետակներուն բերանները կամ
բերաններուն մօտ , և միայն սակաւա-
թիւ խեցեմարմներ տեսնուած են ծով-
եզերքները : Բայց երբեմն երբեմն յս-
վազ (Հաւի) մը կամ նապաստակ մը կը
տեսնուի ձորերուն եզերքնուաներուն
(Գաւառ) կամ կիւնտաներուն («աղա»)
մէջ : Թռչուններն աւելի շատ են : Ծի-
ծեռնիկները և կարանները իրենց բոյ-
ները կը շինեն վերը ժայռերուն մէջ ,
բազէներ («առն»), ձկնկուշներ (պալապալ),
տատարակներ (Գաւառ), ևն : շատ կը

Հնդկաստանի ամենէն հետաքրքրա-
շարժ յիշատակարաններէն մին է Տէլ-
հիի մօտ երկաթէ քանդակեալ սին
մը որուն վրայ գրուած է պատմու-
թիւնը Ռաճա Տանա աշխարհակալին
որ Բրիտանոսէ երեք չորս դար ետքը ապ-
րեցաւ : Տէլհի իր ամենէն մեծ համբաւն
ստացաւ երբ եղաւ Մողոլ կայսերաց
մայրաքաղաքը : Պատկերին մէջ ներ-
կայացուած ամրոցը հին կայսերական
պալատին մէկ մասն է : Բազաքն ունի
աղուոր փողոցներ բոլորովին մաքուր
և լուսաւորուած : Գլխաւոր փողոցը
կը կոչուի Արժամ փողոց : Ասոր մօտ է
ձիհան Շահի շինած մեծ
մզկիթը , Հնդկաստանի ա-
մենէն շքեղ շէնքերէն մին :
Տէլհի Անգլիացոց իշխա-
նութեան անցաւ 1804 ին ,
և հիմա յառաջագէժ վա-
ճառաշահ քաղաք է և մեծ
կեդրոն երկաթուղիներու :
Այժմու բնակչաց թիւն է
475,000 :



ՄԻՏՔԻՆ ՀԱՆԴԱՐՏ ՊԱՂԵՆՈՒ
ԿԱՐՈՂ ԿԻՆ ՄԸ

Երբ կին մը ջուրը կ'իյ-
նայ , սովորաբար ճիչ կ'ար-
ձակէ և գուցէ կը խեղդուի .
չտա անգամ այն բանը կը
պատահի այր մարդոց և
տղոց ալ : Բայց Ռուսիանկ-
թընի Ռիէլընթ թերթը աւե-
լի աղէկ բան մը կը պատմէ :
Երկու տիկիներ և հիւանդ-

սին մէջ այնքան առատութեամբ կը
գտնուի որ առևտուրի կարևոր նիւթ
մը եղած է : Կ'ըսուի թէ առևտրական
նաւթին (շիթ) մեծ մասը անկէ կը հան-
ուի , և ուստի կ'անուանի Հրէական
նաւթ : Ծծմբ մը երբեմն ծովեզերքէն
ձեռք կը բերուի խոտոր կտորներով :
Այս զտրմանալի ծովուն ջուրին՝ ա-
ռարկաները իր երեսն հանելու զօ-
րութիւնն այնքան մեծ է որ դժուար
է լողացողի մը սուզել («առն») անոր
մէջ կամ իր սաքերը վար հրել : Եթէ
մարդ պտուկի կունակի վրայ , վեր բռնէ
իր ծունկերը և անոնց վրայ դնէ իր
ձեռքերը , կրնայ թաւալիլ գրեթէ ա-
ռանց աշխատելու : Երբեմն ըսուած է
թէ բան մը չկրնար իջնել Մեռեալ
Ծովուն յասակը , բայց հարկաւ բոլո-
րովին առասպելական իօսք է այդ :
Նաև կը կարծուէր երբեմն թէ այս
ծովուն մէջ կամ մօտերը կենդանի

գտնուին , Վայրի բաղեր և կացարներ
(էէլէ) կը լողան ջուրին երեսը կամ կը
խաղան ջրեզերքը :
Հոս կը գտնուին քանի մը տեսակ
միջատներ և շատ առատութեամբ թի-
թեռնիկներ , թէպէտ այս ծովուն սահ-
մանները կ'երևին տխուր և ամայի ,
սակայն շատ մը ապրող արարածներու
բնակավայրն են :

ՏԵՂԷԻ

Հիստիային Հնդկաստանի այս հին
քաղաքին անունը առաջին անգամ
յիշուած կը գտնենք Բրիտանոսէ առաջ
առաջին դարուն մէջ . բայց արդէն
քաղաք քաղաքի յաջորդած էին մի և
նոյն տեղին վրայ , իւրաքանչիւրը շին-
ուելով իր նախորդին աւերակներուն
վրայ : Ասոնց առաջինը որ կը կոչուէր
ինտրափրասթհա , կը կարծուի թէ շին-
ուեցաւ Բրիտանոսէ առաջ ժն . դարուն :

տղայ մը որ պատգարակով (Ռիէլէ) կը
տարուէր , չոգ ենաւէ մը ելլող ամենէն
վերջին ուղևորներն էին : Տղան և տի-
կիներէն մին յաջողութեամբ անցան
նաւամատոցին և չոգ ենաւին մէջտեղ
դրուած տախտակին վրայէն , բայց միւս
տիկինը մինչ ինքն ալ կ'անցնէր՝ ինկու
ջուրը , վասն զի տախտակը սահեցաւ
տեղէն խախտելով : Նաւին մէջ գրա-
նուող քանի մը երիտասարդներ ա-
ճապարանօք հանեցին իրենց վերաբ-
կունները և պատրաստ էին ջուրը ցառ-
կելու , բայց ահա տիկինը վեր ջուրին
երեսն ելաւ ժպտուն երեսով՝ ամուր
բռնած իր պարկը և հովանոցը :
«Թող մէկը ջուրը չցատկէ ինձի հա-
մար :» աղաղակեց յուզեալ նաւորդ-
ներուն : «Բան չկայ . ես ջուրին երեսը
պիտի մնամ մինչև որ հանդերձներս
յաւ մը լցուին ջուրով : Ինձի չուան մը
նետեցէք . հարկ չկայ ուրիշ մէկու մըն
ալ թըջելուն :»

Չուանը նեաուեցաւ անոր . տիկինը բռնեց զայն իր մէկ ձեռքով . քաշուեցաւ շողենաւին քով, և ըստ . « Հիմա ձեզմէ մէկը թող հաճի տախտակամածին վրայէն երկնալ և առնել պարկս և հովանոցս , և յետոյ օգնել ինձ դուրս ելլելու : »

Երիտասարդներէն մին ըրաւ այնպէս , և տիկինը շուտով և ապահովապէս ելաւ նախն մէջ :

Բեռնակիր մը կանչուեցաւ և բեռները անմիջապէս տարուեցան սենեակ մը . տիկինը առանձնացաւ հոն և քանի մը վայրկեանէն եկաւ չոր հանգերծ .

Եկեղեցի , թէպէտ աննք իրենքզիրենք կը կոչեն Միացեալ Եղբարք : Յինցընտորֆ իր կենդանութեան ատենը տեսաւ իր եկեղեցին արտաքին միտինտարութեան զարմանալի գործունէայ ընթացքին մէջ յորում մեծապէս գերազանցած է Բողոքականութեան բոլոր միւս ճիւղերը : Առաջին միտինտարայ ծախքերը գրեթէ միայն Յինցընտորֆ կը հոգար իր քսակէն . բայց իր եկեղեցւոյն օգտին համար յաճախ ըրած ճամբորդութիւններուն պատճառաւ անկարելի էր իրեն նայիլ իր անձնական գործերուն , ուստի մեռած



ԿՈՄՍ ՅԻՆՑՆՏՈՐՖ

ներ հաղած և զուարթ , իր ուղեկիցներուն շնորհաորութիւններն ընդունելու և հանդարտեցնելու յուզմունքը իր միւս տիկին բարեկամին որ անմիջապէս նուաղած էր արկածը տեսնելով :

Վտանգի ժամանակ օգտակար է միտքն հանդարտ պահել :

ԿՈՄՍ ՅԻՆՑՆՏՈՐՖ

Այս սուրբ մարդը ծնաւ 1700 ին և մեռաւ 1760 ին : Թէպէտ ազնուական զարմէ էր և գաւաթարակուեցաւ դիւանագիտական կեանքի համար , ընտրեց կրօնական կեանքը : Գո՛հ չեղաւ Լուտերական եկեղեցւոյ բարեպաշտական վիճակէն , և Մորավիայէ փախչող հարածեալ Բողոքականներ ընդունելով՝ անոնց համար շինեց Հէրնհուլթ գեղը : Անոնցմէ կազմեց եկեղեցի մը որ սովորաբար կը կոչուի Մորավեան

ժամանակը աղքատ էր : Մորավեան եկեղեցւոյ վարչական մարմինը տակաւին իր նիստերը կ'ընէ այն գեղեակին մէջ ուր ժամանակաւ կը բնակէր Կոմս Յինցընտորֆ :

ԻՆՉ ԸՐԱՒ ՓՈՍՈՒՈՒԱՆ

Երբեմն տղայք կը խորհին թէ փոքր ըլլալով չեն կրնար բարիք ընել , թէ պարտին սպասել մինչև որ մեծնան , կամ գոնէ մինչև որ իրենց մեծ եղբայրներուն կամ քոյրերուն տարիքին հասնին : Ես ժամանակաւ բան մը կարդացի որ խորհիլ տուաւ ինձ թէ ամենէն փոքրն ալ կրնայ օգնութիւն ընել : Երբեք տեսած եք փոսուոյ (սիւնի սիւնի) : Այն է փոքրիկ ճճի որ կ'արձակէ փոքրիկ լոյս մը :

Կարդացի թէ ճակատամարտ մը պատահած էր և զինուորներէն ոմանք գիշեր ատեն կը փախչէին թշնամիէն :

Անոնք կորսնցուցին իրենց ճամբան Երեսնց հեա կողմնացոյց ունէին որ կրնար ցուցնել ճամբան , միայն թէ այնպէս մութ էր որ չէին կրնար տեսնել կազմնացոյցին ասեղին ցուցած կէտը : Լոյս ալ չունէին , և ոչ կը համարձակէին լոյս կրել իրենց հեա , վաճառել թշնամին կրնար տեսնել և իրենց ետեւէն իյնալ : Ճիշդ այդ ժամանակք անոնցմէ մին տեսաւ խոտերուն մէջ լոյս արձակող փոսուոյ մը : Վերցուց զայն և գրաւ կողմնացոյցին վրայ . և ահա բաւական լոյս եղաւ ցուցնելու թէ կողմնացոյցին ասեղը ո՛ր կէտին վրայ կը գտնուէր : Այն ատեն զինուորք հասկցան թէ ո՛ր կողմն էր իրենց բնակարանը . շատ ուրախ եղան և գացին յառաջ մինչև որ հասան հոն :

Չէ՞ք կարծեր թէ այս մարդիկ կը խորհէին թէ փոքրիկ փոսուոյն կրնար բարիք ընել : Եւ միթէ փոքրիկ տղայ մը չ'է կրնար փոսուոյսի մը ըրածն ընել : Պայծառ և զուարթ ժրպիտներ , հաճոյական խօսքեր , բարի վարք և տան մէջ օգնելու փափաք սողայի մը և աղջկան մը լոյս արձակելու կերպերն են , և այսպէս վարուելով երջանիկ կ'ընեն ամբողջ տունը :

ԵՐԿՈՒ ԱՐՋԵՐ

Ուաշինկթընի կենդանարանական Պարաէզն այցելող քիչ անձինք զանց կ'ընեն այցելել արջերուն որջերը : Կենդանիները փակուած են ցած տեղի մը մէջ որուն չորս կողմը կը պատեն բլուրներ , և ամենէն ցած մասէն կը վազէ գետակ մը : Փակարանին մէկ անկիւնը , գետակին մօտը , բլուր մը զառի վեր կտրուած է և քարեղէն ուղղահայեաց ահագին պատ մը ձեւացած է : Ահա այս պատին մէջ կը գտնուին արջերուն քարայրները , այսինքն որջերը : Ամենէն աւելի ուշագրաւն է հարաւային բաժնին մէջ գրաւուած փոքրիկ որջը ուր կը բնակին Պէն և Ռոզա , երկու գեղեցիկ բուռուային արջեր , որ կը բարեկամանան ամէն մարդու հետ : Պէն և Ռոզա հոն կը բնակին իբր տարիէ մը հետէ , և դիմացած են ամենէն տաք օդին առանց մեծ նեղութիւն մը զգալու : Իսկ անցեալ ձմրան խիստ օդը ճիւղանոնց ուղածն էր : Ամենէն տաք եղանակին անոնց որջին վրայ կը փութի թանձր կտաւ , և պահապանը անոնց վրայ պաղ ջուրի հոսանք մը կ'իջնեցէ յատուկ գործիքով մը : Թէպէտ զուար հոսանք է և հազիւ կրնան տեսնել :

նանք անոր դէմ կանգնել, բայց կը թուի թէ շատ կը սիրեն զայն և կատարեալապէս հանդարտ կը կանգնին որչափ ատեն որ պահապանը կը շարունակէ իր գործը: Անոնց քարայրը «1» գրին ձևն ունի և կը գտնուի հետին ժայռին ներսի կողմը: Շատ զով կը պահուի աղբիւրի մը միջոցաւ որոյ շուրջ կը կաթկթէ գրան մօտը պատերէն: Դաւժաւս կը լուսացուն արջերը յատուկ պատրաստուած լող արանի մը մէջ:

Անոնց զուարճութեան միջոցները պարզ են, բայց լիովին գոհացուցիչ կը թուին: Անցեալ տարի օր մը աղայ մը կը գրօնուր արջերէն մէկուն զարնելով երկայն և հաստ դաւազանով մը: Արջերէն մին, Պէն, ի վերջոյ բարկանալով աղին, իսկոյն դորձաւ և յափը շտակեց գաւազանը անոր ձեռքէն և վանդակին մէջ առաւ: Գաւազանը շաբաթներով մնաց հոն մինչև որ շատ մաշեցաւ: Երկու արջերը իրարու ձեռքէ կը քաշէին զայն, Պէն մէկ ծայրէն և Ռոզա միւս ծայրէն: Ընդհանրապէս մէճը կ'աւարտէր երբ արջերէն մէկը կ'իջնար լող արանին շուրջ: Վասն զի անոնցմէ մին, նպատակ ունենալով միայն գաւազանը ձեռք անցնել, երբ վերջապէս կ'երթար շուրին մօտը և կը քաշէր գաւազանն իր բոլոր ուժով, միւս արջը յանկարծ թող կու տար միւս ծայրը և հանդարտութեամբ վեր կը նայէր, մինչ դժբաղդ յաղթողը իր կռնակին վրայ կ'իջնար կը պառկէր տասնևութ մաս նաչափ խոր շուրին մէջ:

Երբեմն ալ կը փորձէին գաւազանը հաւասարակչուել իրենց գլխուն վրայ, և կարծես թէ հաճոյք կը զգային անոր իրենց գլխէն վար իջնալով կռնակին վրայ գլորեւէն: Բայց իրենց ամենէն աւելի սիրելի դրօսանքն էր փորձել գաւազանը կրթնցնել վանդակին բարակ, բոլորակ և գազաթնահայեաց ձողերուն, որոց արամագիծը կէս մասնաչափէ աւելի չէր: Մէյմը անոնցմէ մին, և մէյմը միւսը ժամերով կը ջանար այս կերպով դրօսուել: Եւ երբ մին կը յաջողէր կանգնեցնել գաւազանը, ընկերը իսկոյն կը զարնէր գաւազանին և վար կը ձգէր, և խազը նորէն այսպէս կը շարունակուէր:

Անոնց ուրիշ մէկ խաղալիկն է իբր ութ մասնաչափ արամագիծով փայտէ մեծ գնտակ մը: Չայս շարունակ կը գլորեն, իրարու կը թաւալեցնեն, և իբր թէ ոտքի գնտախաղ կը խաղան: Երբեմն կը նետեն գնտակը լուսարանին մէջ, և իրենք ալ ետևէն եր-

թալով կը ջանան խածնել զայն մինչ կը տատանի շուրին մէջ: Ով որ ջանալով է տաշտով շուրի մէջ տատանող ինձորը խածնել, կրնայ հասկնալ արջերուն այդ խաղը:

Բայց Պէն և Ռոզա մանուանդ կերակուր ուտելու ժամանակ հետաքրքրութեան կը շարժեն զմարդ: Գիտեն անոնք թէ երբ է ճաշու ժամանակը: Եթէ պահապանը քիչ մը ուշացնէ ճաշը, մեծամեծ աղաղակներ կը հանեն: Բևեռային արջերը այնպիսի մեղմ և հաճելի կենդանիներ են, որ անոնց այս աղաղակները տարօրինակ և անակնկալ կը թուին: Անոնց հիմա երկու տեսակ ուտեստ կը արուի, հացի ճերմակ նկանակներ և ձուկ: Նկանակները, որ Պէնի գլխուն կրկնապատիկ մեծութիւնն ունին, պահապանն օդին մէջ կը նետէ, որպէս զի արջերը ճարտարութեամբ մը բռնեն անոնց վար ինկած ժամանակը:

Արջերն ընդհանրապէս հացը կը թրջեն ուտելէ առաջ: Յետոյ իւրաքանչիւր կ'ուտէ իր նկանակին իբր կէսը, այնուհետև մնացածը կը փոխանակեն իրարու հետ: Այս գարնանայի սովորութիւնը կը պահեն ամէն կերակուրի ատեն: Այսպէս իւրաքանչիւր կ'ուտէ ձկան կէսը: Յետոյ կը փոխեն իրենց ստեղծը և կ'ուտեն իրարու թողած կէսերը: Չուկերը կը բաժնեն տարօրինակ կերպով մը, կը կիսեն զանոնք երկայնքով որչափարին գծէն, և երկու մաս կ'ընեն, այնպէս ուղիղ կտրելով իբր թէ սուր գանակով մը: Միշտ ձկան թոքերէն կը սկսին խածնել:

ՓՈՒՔՐԻԿ ՏՂԱՆ ԻՆՉՊԷՏ ՍՈՐՎԵՑԱԻ ԴԱՍ ՄԸ

Օրը տաք էր, և փոքրիկ տղայ մը մեծ ծառի մը ներքև պառկած կը կարդար հետաքրքրաշարժ գիրք մը «Զաւակ»՝ ըսաւ մայրը, «կը հաճի՞ս պարտեղ երթալ և ինձի բերել գրքս մը հազար (հաւառ)»՝ «Ո՛հ, ո՛չ, չեմ կրնար» ըսաւ փոքրիկը, «չատ տաք եմ»: Տղին հայրը, որ կ'աշխատէր քովի պարտեղին մէջ, երբ լսեց անոր այս պատասխանը, ուսերէն մեղմով բռնելով վերջուց զնա և խոթեց ջրով լեցուն մեծ աաշաի մը մէջ որ հոն դրուած էր բոյսերը ջրելու համար: «Տղաս» ըսաւ, «հիմա բաւական դու փացած ես, զնա բեր հազարը, բայց միտք պահէ որ աւելի դիւրին է իսկոյն, ճիշդ քեզի ըսուած ժամանակը երթալ, վասն զի այն ատեն պէտք պիտի չունենաս հանդերձները փոխելու»: Տղան պարտեղ գնաց մինչ իր վրայէն կը կաթկթէր շուրջ և բերաւ հազարը: Յետոյ այն թրջուած փեմակին մէջ սուռն մտաւ և փոխեց հանդերձները, բայց գիտէր որ ըսելու բան մը չունէր: Սովորութիւնն այս է այն տեղը ուր կը բնակի այդ փոքրիկ տղան: Կ'ուզէ՞ք հոն բնակիլ: Թերևս չէք ուզեր: Բայց նա է շատ երջանիկ տղայ մը և կը սորվի թէ երբեք պիտի

չպատժուի եթէ անմիջապէս կատարէ ինչ որ կը հրամայուի:

ՄԵՐ ԵՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ


Մարդիկ կը մեռնին շունչ չառնելով: և շատ անգամ կոնուի կը մեռնին մինչ կրնային տարիւ աւելի երկար եթէ իրենց շնչառութեան գործարաններուն հոգ տանէին:

Կը կարծուի թէ թոքերը իբր վեց միլիոն օդի բջիջ ունին որք, եթէ կէտրելի ըլլար տարածել, պիտի ծածկէին երկու հարիւր քառակուսի եարոտ տեղ, և որք արիւն մաքրելու գործին մէջ կրնդունին իրենց թաղանթներուն մէջէն օդին թթուածինը, կը միացնեն զայն արեան օժիածինին հետ, յառաջ կը բերեն ջերմութիւն և կը մաքրեն արիւնը: Արար կը կծկի և դուրս կը մղէ արիւնը, յառաջ կը բերէ բազիկին վարիը (շառ), մէկ շնչառութեան միջոցին իբր չորս անգամ, և այս շնչառութիւնը և արեան շրջան բնեղ մեծապէս կապակցութիւն ունին արեան մաքրութեան և մարմնոյն ջերմութեան հետ: Ուստի այս երկու գործողութիւնները պէտք է շարունակեն գլխերից երեկ, եթէ ոչ շատով կը մեռնինք, կամ՝ ցրտէ, կամ՝ անմաքրութեան, կամ՝ երկուքէն ալ:

Որպէս զի առատ օդ ներշնչեք, հարկ է որ մեր թոքերը կատարեն իրենց բնական գործողութիւնը, չթող լով որ ճնշուի մեր կուրծքը կամ մէջքը, վասն զի երբեք թոքերը շատ մեծ կամ՝ անոնց բջիջները թուով շատ չեն: Քանի որ ասոնք ուղղակի և սերտ յարաբերութիւն ունին մարմին հետ, մարմնը պէտք է որ մաքուր և գործունեայ փեմակի մէջ պահուի, վասն զի անոնց երկուքին ալ գործողութիւնն անհրաժեշտ է արեան մաքրութեան համար:

Եթէ թոքերը չկրնան կատարել իրենց պաշտօնը, օդը աղէկ չընդունուի, միջոցոյն արիւնը չկրնար ըստ պատշաճի մաքրուիլ և դառնալ պայծառ կարմիր գոյնի, վարդերը կը թարշամին այտերուն վրայ, և մարմնոյն գոյնը կը միմնայ և կ'արլի, շնչառական գործարաններն անբող կը խանգարին, թոքերուն ցած մասերը որ անգործ կը թողուին, կը հիւանդանան և կը թմրին, և վերի մասերը որ չափազանց կը գործեն, կ'ախառուորին, կը բարձրանան, և ի վերջոյ հոգ յառաջ կու գայ և արեան հոսումը թոքերէն և մահ՝ շնչառութեան պակասութեան մինչ մարդիկ պիտի ըլլային առողջ, զօրաւոր և երջանիկ եթէ աղէկ հոգ տանէին իրենց թոքերը:

Ամերիկայի Մեխիկոնար
Արտօնատէր
Տնօրէն—Խմբագիր
Ֆինանսները Երգիւն



ԿՈՍՏԱՆԴ
1 ՏՊԱՐԱՆԻ Ա. ԵՊԱՌ ԳՈՐԾԱՐԱՆ